ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «23» հուլիսի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 25-Ա/Ք

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի նախագահի 2019 թվականի հուլիսի 22-ի N 24-Ա/Ք հրամանով հաստատված «Գիտական հրատարակումների համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի և գիտության մասսայականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգի» 4-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ստեղծել մրցութային հանձնաժողով գիտական հրատարակումների համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի հայտերը գնահատելու և գիտության մասսայականացման միջոցառման անցկացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով:

2. Հաստատել՝

1) հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԳԿ նախագահի
«23» հուլիսի, 2019 թ.
N 25-Ա/Ք հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ասատրյան Ռուզան -	ՀՀ գիտության կոմիտեի ԳԳԿ վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),
Մաթևոսյան Կարեն -	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն,
Ջրբաշյան Աշխեն -	ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ,
Վարդանյան Իշխան -	ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության պետ,
Սարգսյան Հակոբ -	ՀՀ գիտության կոմիտեի ԳԳԿՎ գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար):

Հավելված N 2
ՀՀ ԳԿ նախագահի
«23» հուլիսի, 2019 թ.
N 25-Ա/Ք հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների (գիտական խմբերի) հեղինակած գիտական աշխատությունների հրատարակման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի հայտերի (այսուհետ՝ Հայտ) գնահատումը և գիտության մասսայականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին եզրակացություն տալը իրականացնում է ՀՀ գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի հրամանով ստեղծված մրցութային (գնահատող) հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

1) Հայտերի գնահատումը,

2) գիտական աշխատությունների հրատարակման կամ գիտության մասսայականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն տալը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են ըստ դրանց անհրաժեշտության առաջացման:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:

7. Հանձնաժողովի անդամները գնահատում են Հայտը՝ լրացնելով գնահատման թերթիկը (Հանձնաժողովի աշխատակարգի հավելված): Գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր՝ 1 միավորի ճշտությամբ: Հանձնաժողովը կազմում է Հայտերի վարկանիշային ցանկ՝ ըստ յուրաքանչյուր Հայտի գնահատականների միջին թվաբանականի:

8. Հանձնաժողովը տալիս է գիտական աշխատությունների հրատարակմանն աջակցության կամ գիտության մասսայականացման միջոցառմանն աջակցություն տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

9. Շեմային գնահատականը գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50%-ն է: Դրան հավասար կամ ավելի բարձր գնահատված Հայտերին տրվում է դրական եզրակացություն:

10. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

11. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է Հանձնաժողովի նիստերը.
2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը.
3) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

12. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին.
2) լրացնում է գնահատման թերթիկը.
3) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.
4) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

13. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) Հանձնաժողովի անդամ չէ.
2) պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար.
3) ապահովում է Հայտերի գնահատման թերթիկների պատրաստումը.
4) Հայտերը տրամադրում է Հանձնաժողովի անդամներին.
5) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.
6) ապահովում է Հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Հավելված
մրցութային հանձնաժողովի աշխատակարգի

ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայտատուի ազգանուն, անուն, հայրանուն _____

Հ/h	Չափորոշիչներ	Գնահատական	
		առավելագույն	վերջնական
1.	Գիտական աշխատության հիմնարար բնույթը		
գիտական աշխատությունն ունի հիմնարար բնույթ և տվյալ ոլորտում գիտելիքի ավելացման մեջ կարող է ունենալ շոշափելի ներդրում		5	
գիտական աշխատությունն ունի մասամբ հիմնարար բնույթ և տվյալ ոլորտում կարող է նպաստել գիտելիքի ավելացմանը		4	
գիտական աշխատությունը հիմնարար բնույթի չէ		2	
2.	Գիտական աշխատության հրատարակման անհրաժեշտության հիմնավորումը		
լիովին հիմնավորված է		5	
հիմնավորված է		4	
մասամբ է հիմնավորված		2	
3.	Գիտական աշխատության թեմայի համապատասխանությունը ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություններին		
լիովին համապատասխանում է		5	
համապատասխանում է		4	
մասամբ է համապատասխանում		2	
4.	Հայտատուի գիտական արդյունավետության բնութագիր		
WOS և Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում (հումանիտար ոլորտի համար՝ Կոմիտեի հաստատած ցանկում) գիտական հրապարակումների քանակը 5 կամ ավելի է		5	
WOS և Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում (հումանիտար ոլորտի համար՝ Կոմիտեի հաստատած ցանկում) գիտական հրապարակումների քանակը 1–4 է		4	
վերջին 5 տարիների ընթացքում բարձր վարկանիշով գիտական ամսագրերում հրապարակումներ բացակայում են		2	
5.	Նախատեսվող տպաքանակի և հայցվող գումարի հիմնավորվածությունը		
լիովին հիմնավորված է		5	
հիմնավորված է		4	
մասամբ է հիմնավորված		2	
Հայտի ընդհանուր գնահատական		25	

Գնահատող՝ _____ _____
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

Գնահատման ամսաթիվ